

Նախորդ դարի 30-ական թվականներից սկսած՝ ընդհանուր լեզվաբանական միտքը զարգացել է՝ ուղղակի կամ անուղղակի կերպով իր ուշադրության կենտրոնում ունենալով Ֆերդինանդ դը Սոսյուրի «Ընդհանուր լեզվաբանության դասընթացի»¹ (այսուհետև՝ «Դասընթաց») հիմնական գաղափարները: Իհարկե, ինչպես հաճախ է լինում, «Դասընթացի» առաջին արձագանքները եղել են բավական զուսպ: Շատերը նրանում չեն տեսել որևէ նոր գաղափար, որը մինչ այդ չէր արտահայտվել լեզվաբանության մեջ: Ինչպես «Դասընթացի», այնպես էլ Սոսյուրի անձի շուրջ հետաքրքրությունը մեծացավ հատկապես 1927 թ. հետո, երբ լեռ լեզվաբան Ե. Կուրիլովիչը խեթերենի տվյալների հիման վրա հաստատեց հնդեվրոպական նախալեզվում կոկորդային հնչյունների գոյության փաստը, որի առաջին կանխատեսումն արել էր երիտասարդ Սոսյուրը դրանից շուրջ 50 տարի առաջ «Նկատառումներ հնդեվրոպական լեզուների ձայնավորների նախնական համակարգի վերաբերյալ» («Mémoire sur le système primitif des voyelles dans les langues indo-européennes», Leipsick, 1879) (այսուհետև՝ «Նկատառումներ») աշխատության մեջ: Սոսյուրի կողմից արված մտահայեցողական կանխատեսման փաստական հաստատումը, թերևս, եղավ այն գլխավոր խթանը, որը լեզվաբաններին մղեց ավելի ուշադիր ընթերցելու նաև «Դասընթացը» և հաճախ իրենց ծանոթ տերմինների ու արտահայտությունների տակ նկատելու իսկապես նորը, որն առաջարկում էր նշանավոր շվեյցարացին: Սկիզբ առավ սոսյուրագիտության դարաշրջանը: Այն սկզբնավորեցին Սոսյուրի երկու երախտագետ աշակերտները՝ Շ. Բալլին և Ա. Մեշեն՝ կազմելով և հրատարակելով «Դասընթացը», իսկ շարունակեցին նրանց աշակերտները, աշակերտների աշակերտները, Սոսյուրի համախոհներն ու հետևորդները տարբեր երկրներում: «Դասընթացի» գաղափարները դժվարությամբ ճանապարհի հարթեցին իրենց համար: Եվ ոչ միայն այն պատճառով, որ, ըստ Գ. Գիյոմի դիպուկ դիտարկման, այդ շրջանի «լեզվաբանության մեջ թագավորում էր պատմական մերանը»², այլև այն պատճառով, որ դրանցից շատերը ամբողջական և հակասություններից զերծ ձևակերպում չէին ստացել այդ նշանավոր աշխատության մեջ: Իհարկե, դա չի նշանակում, որ «Դասընթացը» չնկատվեց առհասարակ: Ժամանակի նշանավոր հնդեվրոպաբաններից մեկը՝ Ա. Մեյեն, այն գնահատեց որպես «փտածության տեղում կարգ ու կանոնի սկիզբ

¹ Ֆերդինանդ դը Սոսյուր, *Ընդհանուր լեզվաբանության դասընթաց, ֆրանս. թարգմ., առաջաբան և ծանոթագր.* Մուրադյան Ա., Ե., 2008: Հղումներն այս աշխատությանը կտրվեն շարադրանքում՝ նշելով միայն էջը:

² Гийом Г. Принципы теоретической лингвистики, изд. 3-е, М., 2007, с. 35.

դնելու» օրինակ³, Ժ. Վանդրիեսը խոստովանեց, որ «Սոսյուրի աշխատանքն ամփոփում է խոր ու ինքնատիպ մտքեր»⁴, իսկ Հ. Շուխարդտին Սոսյուրի գիրքը «համակեց թարմության և ինքնուրույնության ոգով», նաև՝ «թերևս, անհանգստության ոգով»⁵: Այդուհանդերձ, ինչպես որ կես դար պահանջվեց «Նկատառումների» հանճարեղ կանխատեսման հաստատման համար, այնպես էլ շուրջ կես դար էր անհրաժեշտ «Դասընթացի» (հետևաբար՝ նաև սոսյուրագիտության) ինքնահաստատման համար⁶:

XIX դարն ամբողջությամբ և XX դարի սկիզբը պատմահամեմատական լեզվաբանության գերիշխանության ժամանակաշրջանն էր: Պատմական մոտեցումը տիրապետող էր ոչ միայն համեմատական լեզվաբանության մեջ, այլև ընդհանուր լեզվաբանական աշխատություններում: Այդ ելակետով են շարադրված ինչպես Վիլհելմ ֆոն Հումբոլդտի տեսական ուսումնասիրությունները, մասնավորապես՝ նրա ամենից նշանավոր գործը՝ «Մարդկային լեզուների կառուցվածքի տարբերությունների և մարդկության հոգևոր զարգացման վրա նրա ազդեցության մասին» (Բեռլին, 1830-1835), այնպես էլ Հերման Պաուլի «Լեզվի պատմության սկզբունքները» (Ֆրայբուրգ, 1880) աշխատությունը, որոնք նախադասընթացյան շրջանի ընդհանուր լեզվաբանական գլխավոր աշխատություններն էին, եթե նկատի չունենանք շուրջ 250 տարի առաջ՝ 1660 թ. ստեղծված Պոր-Ռոյալի «Ընդհանուր և ռացիոնալիստական քերականությունը», որը վաղուց այլևս ուներ միայն պատմական նշանակություն: «Դասընթացին» զուգահեռ կամ դրանից անմիջապես հետո ստեղծվում են ընդհանուր լեզվաբանական բնույթի մեծարժեք այլ աշխատություններ ևս, ինչպիսիք են Ժ. Վանդրիեսի «Լեզու. պատմության լեզվաբանական ներածություն» (Փարիզ, 1920), Ա. Մեյեի «Պատմական լեզվաբանություն և ընդհանուր լեզվաբանություն» (Փարիզ, 1921), Էդ. Սեպիրի «Լեզու. խոսքի ուսումնասիրության ներածություն» (Նյու Յորք, 1921), Հ. Շուխարդտի «Ընդհանուր լեզվաբանության ուղեցույց» (Հալլե, 1922) գրքերը, որոնցում ևս գերակայող էր մնում պատմականության սկզբունքը: Սոսյուրի նշանավոր աշխատությունը պատմականության այդ ընդհանուր հենքի վրա, ի թիվս այլ հարցադրումների, առանձնանում էր համաժամանակյա լեզվաբանության առաջնայնության շեշտադրումով, որը ոչ միայն նրան սահմանազատում էր նշված բոլոր երկերից, այլև նոր դարագլուխ էր բացում լեզվաբանության առաջընթացի ճանապարհին, այդ թվում՝ նախադրյալներ ստեղծելով նոր ուղղության՝ կառուցվածքաբանության (структурализм) ձևավորման համար: «Դասընթացը» նշված աշխատություններից տարբերվում էր մեկ

³ Meillet A. *Linguistique historique et linguistique générale*, Paris, 1921, p. VIII.

⁴ Вандриес Ж. *Язык*, М., 1937, с. 330.

⁵ Шухардт Г. О книге Ф. де Соссюра "Курс общей лингвистики" (*Избранные статьи по языкознанию*, М., 1950, с. 197).

⁶ Бенвенист Эмиль. *Соссюр полвека спустя* (*Общая лингвистика*, М., 1974, с. 59).

շահեկան կողմով ևս. այն բոլորից շատ էր համապատասխանում ընդհանուր լեզվաբանական համարվելու չափանիշին⁷:

Մեծ է «Դասընթացի» ազդեցությունը XX դ. լեզվաբանական մտքի զարգացման վրա: Բոլորովին պատահական չէ, որ շատերը Սոսյուրին համարում են ոչ միայն կառուցվածքային լեզվաբանության (չնայած որ նա հատուկ հարցադրում չունի լեզվի կառուցվածքային բնույթի մասին), այլև, առհասարակ, ժամանակակից լեզվաբանության հիմնադիր⁸:

«Դասընթացում» տեղ գտած հիմնական հարցադրումները կանխադրույթների արժեք ունեն. դրանք հնչում են որպես բացարձակ ճշմարտություններ և դրանց՝ իբրև հիմնասյուների վրա բարձրանում է Սոսյուրի ուսմունքը: Այդ կանխադրույթներն են.

1) լեզուն ունի համակարգային բնույթ. նրա բաղադրիչները փոխալայմանավորված են մեկը մյուսով. լեզվում պատահական ոչինչ չկա,

2) իբրև համակարգ՝ լեզուն ունի նշանային բնույթ. նշանային բնույթ ունեն առհասարակ հասարակական երևույթներն ու հարաբերությունները, լեզվանշանային համակարգն ընդհանուր նշանային համակարգի (ըստ Սոսյուրի՝ *semeologie*-ի) մի մասն է, ուստի և լեզվաբանությունը պիտի մշակվի որպես ընդհանուր նշանագիտությանը մաս կազմող գիտակարգ,

3) լեզուն ձև է և ոչ թե՛ սուբստանց,

4) լեզուն կարող է ուսումնասիրվել երեք հայեցակետով՝ համաժամանակյա (սինխրոնիկ), տարաժամանակյա (դիախրոնիկ) և ապաժամանակյա (ախրոնիկ), որոնց համապատասխան էլ պիտի տարբերակել երեք կարգի լեզվաբանություն՝ համաժամանակյա (կամ ներքին), տարաժամանակյա (կամ արտաքին) և ապաժամանակյա. նախապատվությունը պիտի տալ համաժամանակյա լեզվաբանությանը,

5) պիտի սահմանազատել ուսումնասիրվող նյութի լեզվական և խոսքային հայեցակերպերը. դրանք տարասեռ երևույթներ են. առաջինը՝ հասարակական, երկրորդը՝ անհատական. դրանց ամբողջությունը լեզվախոսությունն է (*langage*). լեզվի ուսումնասիրությամբ պիտի զբաղվի լեզվի լեզվաբանությունը, իսկ խոսքի ուսումնասիրությամբ՝ խոսքի լեզվաբանությունը,

6) լեզվական բաղադրիչների միջև առկա են երկու տիպի հարաբերություններ՝ շարակարգային և գուգորդային. առաջնային են շարակարգային հարաբերությունները,

7) լեզվում կան միայն տարբերություններ:

Նշված կանխադրույթներից բացի, Սոսյուրն առաջադրել է նաև այլ արժեքավոր գաղափարներ, ինչպես՝ հնչույթի և այն ուսումնա-

⁷ Вандриес Ж., *նշվ. աշխ.*, էջ 17:

⁸ Ельмслев Л., *Метод структурного анализа в лингвистике* (Звегинцев В. А. *История языкознания XIX-XX веков в очерках и извлечениях*, ч. II, М., 1965, с. 103); Бенвенист Эмиль, *նշվ. աշխ.*, էջ 59, Лайонз Джон, *Введение в теоретическую лингвистику*, М., 1978, с. 55.

սիրող բաժնի՝ հնչյութաբանության սահմանազատումը հնչյունից և հնչյունաբանությունից, շարույթի (syntagma)՝ որպես շարակարգության բաղադրիչի, լեզվական արժեքի (valeur) և այլն, որոնք նույնպես կարևոր դեր են խաղացել լեզվաբանական մտքի զարգացման համար, անկախ այն բանից, թե դրանցից որը որքանով է ընդունվել:

«Դասընթացի» մասին շատ է գրվել նախորդ դարի ընթացքում, բայց մեր օրերում ևս դրա նկատմամբ հետաքրքրությունը չի նվազել: Չնայած որ հետսոսյուրյան ժամանակաշրջանը հարուստ է նոր գաղափարներով, սակայն ուղղակի կամ անուղղակի կերպով դրանց զգալի մասի ակունքներում, առնվազն իբրև խթան, հենց սոսյուրյան լեզվական պատկերացումներն են: Իսկ այդ պատկերացումների մեջ առանցքային են հատկապես երկուսը՝ լեզվի համակարգային (1) և ձևային (3) բնույթի վերաբերյալ կանխադրությունները, որոնց նշանակությունը ժամանակակից լեզվաբանության համար դժվար է գերազնահատել: Այդ հարցադրումներին անդրադառնանք առանձնաբար:

Ա) Լեզուն ունի համակարգային բնույթ: «Դասընթացի» մասին գրախոսականում ավստրիացի նշանավոր լեզվաբան Հ. Շուխարդտը Մոսկովին անվանում է «համակարգի ստեղծող»՝ նշելով, որ «դա պիտի հասկանալ որպես գովեստ, նման այն բանին, ինչպես «ոչ համակարգային» արտահայտությունը մենք ընկալում ենք իբրև հանդիմանություն»⁹ (ընդգծումը մերն է - Պ. Վ.): Ընդգծված մասից նկատելի է, սակայն, որ համակարգի գաղափարն առնվազն նոր չէր «Դասընթացի» ժամանակաշրջանում: Ավելին, այն հանդիպում է դեռևս Վիլհելմ ֆոն Հումբոլդտի մոտ՝ «Դասընթացի» հրատարակությունից ավելի քան 80 տարի առաջ: Հումբոլդտը լեզվական համակարգը համեմատում է «վիթխարի գործվածքի հետ, որի բոլոր թելերը շատ կամ քիչ նկատելի կերպով կապված են միմյանց հետ, և յուրաքանչյուրը՝ ողջ գործվածքի հետ ամբողջությամբ: Որ կողմից էլ որ մոտենաս, մարդն ամեն անգամ խոսքում առնչվում է միայն որևէ առանձին թելի, բայց, շարժվելով բնագոյով, նա մշտապես այնպես է անում, կարծես թե այդ պահին նրան բաց է ողջ հիմքը, որի մեջ անխուսափելիորեն ներհյուսված է այդ առանձին թելը»¹⁰:

Համակարգի մասին «Դասընթացում» տեղ գտած պատկերացումը Շուխարդտը գնահատում է որպես «տարանջատ իրերը» «միակցելու» փորձ. այդ տեսակի համակարգերն «ունեն միայն ժամանակավոր և պայմանական նշանակություն»¹¹: «Դասընթացի» համակար-

⁹ Шухардт Г., *նշվ. աշխ.*, էջ 186:

¹⁰ Вильгельм фон Гумбольдт. О различии строения человеческих языков и его влияния на духовное развитие человечества (Избранные труды по языкознанию, М., 1984, с. 88). Տե՛ս արհասարակ «Լեզուների հնչյունական համակարգը: Հոդաբաշխ հնչյունի բնույթը» հատվածը, էջ 84-88:

¹¹ ՄԳՈՐԴՑ Թ., *նշվ. աշխ.*, էջ 186: Այս գրախոսությունը, որ լույս է տեսել 1917 թ., «Դասընթացի» վերաբերյալ առաջին տպագիր արձագանքներից է, եթե ոչ՝ հենց առաջինը:

զին նա հակադրում է «Նկատառումների» համակարգը. վերջինը, ըստ Շուխարդտի, վերաբերում է «պատրաստի տեսքով բուն իրերի մեջ ամփոփված» համակարգերի տեսակին, «որոնք մեզ մնում է սուս բացահայտել»¹²:

Ըստ Սոսյուրի՝ լեզվական համակարգի հիմնական հատկանիշը նշանային բնույթ ունենալն է, որովհետև նշանային բնույթ ունեն այդ համակարգի բաղադրիչները: Սակայն, նշված հատկությունից բացի, լեզվական համակարգն օժտված է նաև այլ բնութագրերով, որոնք «Դասընթացում» գրեթե աննկատ են մնում՝ ցրված լինելով գրքի տարբեր բաժիններում և արտահայտվելով տվյալ նյութի առնչությամբ: Իհարկե, եթե նկատի չունենանք նշանային բնութագիրը, ապա ընդհանուր առմամբ լեզվական համակարգի մասին՝ իբրև կանխադրույթի, «Դասընթացում» քիչ բան է ասված: Իսկ այդ քիչ ասվածի հիմնական միտքն այն է, որ լեզվում բոլոր բաղադրիչները փոխադասարկված են մեկը մյուսով, բաղադրիչներից մեկի փոփոխությունը իր հետևից առաջ է բերում փոփոխություններ ողջ համակարգում կամ նրա մի մասում¹³:

Լեզվական համակարգի մասին Սոսյուրի «Ժլատ» ձևակերպումներն էլ շատ ընդհանրական բնույթի են: Դրանց մեջ սահմանումի արժեք ունի թերևս հետևյալ ձևակերպումը. «Լեզվական համակարգը հնչյունական տարբերությունների շարք է՝ համակցված հասկացական տարբերությունների շարքին» (184-185): Այս կամ այն կերպ համակարգն են բնութագրում նաև հետևյալ արտահայտությունները. «...լեզուն պետք է ուսումնասիրել որպես այդպիսին...» (33), «Լեզվի իսկական բնույթը բացահայտելու համար այն պետք է դիտարկել ըստ նույն կարգի այլ համակարգերի հետ նրա ունեցած ընդհանրությունների» (34), «Լեզուն այնպիսի մի համակարգ է, որը միայն իր սեփական կարգն է ընդունում» (42), «... ներքին է այն ամենը, ինչ որևէ չափով փոխում է համակարգը» (43): Նշվածներին կարելի է ավելացնել նաև «Դասընթացի» ամփոփիչ միտքը, որը,

¹² Նույն տեղում:

¹³ Լեզվի նկատմամբ համակարգային մոտեցումն ընկած էր դեռևս «Նկատառումների» հիմքում: Հենց այդպիսի մոտեցումն է խթանել «կոկորդային ձայնավորների» մասին Սոսյուրի հանճարեղ կանխատեսումը: Եվ բոլորովին էլ պատահական չէ, որ Ա. Մեյեն՝ Սոսյուրի առաջին աշակերտներից մեկը, «Նկատառումները» բնութագրում է «հիասքանչ» և «նշանավոր» մակդիրներով (տե՛ս Meillet A., նշվ. աշխ., էջ 41): Պիտի նկատել, որ Ա. Մեյեն՝ հնդեվրոպական լեզվաբանության ականավոր ներկայացուցիչներից մեկը, անթաքույց հիացմունքով է արտահայտվել Ֆ. դը Սոսյուրի փարիզյան գործունեության շրջանի մասին (1880-1891): Այդ են վկայում հետևյալ տողերը. «Նրան լսելու բարեբախտություն ունեցողներից ոչ ոք երբեք չի մոռանա Բարձրագույն դպրոցի այդ մտերմիկ դասերը, երբ ձևի զուսպ ներդաշնակությամբ այնպես լավ քողարկվում էին կատարյալ վստահությունը և տեղեկության լայնածավալությունը, և երբ անդրդվելիորեն խիստ մեթոդի ճշգրտությունը թույլ էր տալիս հագիլիվազ նշմարել կանխագագողության հանճարեղությունը» (նույն տեղում, էջ 2): Նույն անթաքույց ակնածանքն առկա է նաև Ա. Մեյեի հանրահայտ համեմատական քերականության մեջ (տե՛ս Meise A. Введение в сравнительное изучение индоевропейских языков, М.-Л., 1938, с. 34, 462-464, 469):

ըստ հեղինակի, «հիմնականն է իր ուսմունքի համար»: Այն է՝ «...լեզվաբանության միակ և իսկական առարկան ինքն իր մեջ և իր համար դիտարկվող լեզուն է» (357): Հատկապես վերջին նախադասությունը վաղուց է գրավել ուսումնասիրողների ուշադրությունը՝ արժանանալով տարբեր գնահատականների: Ըստ էության, այդ միտքը նշանակում է, որ լեզուն փակ համակարգ է, ինչը չի համապատասխանում ոչ միայն լեզվի բուն էությանը, այլև հենց լեզուն հասարակական երևույթ համարելու սոսյուրյան հիմնադրույթին: Մի տեսակետի համաձայն, այդ միտքը Սոսյուրին վերագրվել է «Դասընթացի» կանոնարկված տեքստը կազմողների կողմից, իսկ իրականում դասախոսություններում այդպիսի ձևակերպում չի հայտնաբերվել¹⁴:

Պետք է նկատել, որ «Դասընթացի» գլխավոր դրույթները, որպես կանոն, առարկություն չընդունող տոն ունեն: Շուխարդտը դա վերագրում է հեղինակի կողմից դրանց իրավացիության հարցում մինչև վերջ համոզված չլինելուն¹⁵: Նույն վստահությամբ, սակայն, կարելի է պնդել նաև հակառակը: Կան հանգամանքներ, որոնք բոլոր դեպքերում պիտի նկատի ունենան ընթերցողն ու քննադատը. 1) հնարավոր է, որ բանավոր խոսքում հեղինակի դատողություններն իսկապես կտրուկ են հնչել, բայց հնարավոր է նաև, որ դասախոսությունների գրքային տարբերակն անձամբ նախապատրաստելու դեպքում նա «հղկեր» դրանց սուր անկյունները. չէ՞ որ նա նույնիսկ երկրորդ անգամ այդ հարցերի մասին խոսելու հնարավորություն չի ունեցել. 2) արդյո՞ք սուր անկյուններ չունեցող, չափված-ձևված «Դասընթացը» հետագա լեզվաբանական մտքի համար կունենար այն նշանակությունը, որն ունեցավ: Կարծում ենք՝ ոչ: Եվ մի՞թե հնարավոր է ցույց տալ որևէ լեզվաբանական աշխատություն (որքան էլ այն արժեքավոր լինի), որը միանշանակ ընդունվում է բոլորի կողմից կամ խոցելի չէ առհասարակ: Գաղափարների ինքնատիպությունն ինքնին ենթադրում է հակադրություն: «Դասընթացի» գլխավոր արժանիքը հենց ինքնատիպ գաղափարների առատությունն է: Ավելի ճիշտ՝ այդ գաղափարների ինքնօրինակ բանաձևումները:

Լեզվական համակարգի մասին քաղված դատողություններից չորսը կրկնում են նույն միտքը՝ լեզուն փակ համակարգ է, և միայն մեկը՝ 2-րդն է տարբեր. այն կարծես խախտում է լեզվական համակարգի և այլ համակարգերի միջև մյուս չորս բանաձևումներով գծված սահմանաբաժանը, որովհետև լեզուն համարում է բաց համակարգ: Թվում է՝ հակասությունն ակնհայտ է: Առանձին սոսյուրագետների նման մենք ևս հակված ենք այդ հակասությունը վերագրելու «Դասընթացին» ու ոչ թե Սոսյուրին, բայց, ի տարբերություն նրանց, «Դասընթաց» ասելով՝ մենք նկատի չունենք զիրքը

¹⁴ Холодович А. А. О «Курсе общей лингвистики» Фердинанда де Соссюра (*Фердинанд де Соссюр. Труды по языкознанию*, М., 1977, с. 18-19); Будагов Р. А. *Портреты языковедов XIX-XX вв.*, М., 1988, с. 188-191.

¹⁵ Шухардт Г., *նշվ. աշխ.*, էջ 193:

կազմողներին՝ Շ. Բալիին և Ա. Սեշեին, որքան էլ որ վերջիններս հոժարակամ իրենց կողմն են ուղղել հնարավոր քննադատությունների սլաքը: «Հակասությունը» պայմանավորված է գրքի ծննդյան հանգամանքներով: Պարզաբանենք մեր միտքը: Ի թիվս լեզվական նշանի հատկանիշների, Սոսյուրն ասում է. ա) լեզվական նշանն ընդհանրապես անփոփոխ է, բ) կարող է նաև փոփոխվել: Այս բանաձևումների թվացյալ հակասությունն անմիջապես հոդս է ցնդում, երբ լսում ենք հեղինակի բացատրությունները: Լեզուն կոլեկտիվ ստեղծագործություն է և ոչ թե՝ անհատական, իսկ կոլեկտիվը պահպանողական է փոփոխությունների նկատմամբ: Եվ որովհետև լեզուն բաղկացած է նշաններից, լեզվի անփոփոխությունը ենթադրում է նաև նշանի անփոփոխություն: Մյուս կողմից, սակայն, երկարատև ժամանակի ընթացքում լեզուն կրում է որոշակի փոփոխություններ. այդպիսի փոփոխությունների քանակական կուտակումը ժամանակ առ ժամանակ հանգեցնում է լեզվի որակական փոփոխության: Իսկ լեզվի փոփոխությունը նախ և առաջ նշանի (նշանների) փոփոխություն է:

Եթե լեզվական նշանի առնչությամբ Սոսյուրի բացատրություններն ապահովում են այն նվազագույնը, որ առաջին հայացքից թվացյալ հակասություն(ներ)ը գործնականում չեզոքացվեն, ապա համակարգի լայն ըմբռնման դեպքում դա նրան չի հաջողվել: Թերևս երկրորդական չէ նաև այն հանգամանքը, որ լեզվական համակարգի մասին «Դասընթացը» հատուկ գլուխ կամ բաժին չունի, ի տարբերություն մյուս հասկացությունների, ինչը ինքնաբերաբար հեղինակին «կհարկադրեր» այդ առումով ամբողջացնելու իր դատողությունները:

Հասարակական (ըստ Սոսյուրի՝ նշանագիտական) երևույթ լինելով հանդերձ՝ լեզուն էապես տարբերվում է մյուս բոլոր հասարակական (նշանագիտական) երևույթներից: Լինելով հասարակական հաղորդակցման միջոց՝ լեզուն, բնականաբար, չի կարող գերծ մնալ հասարակական տարբեր կարգի ազդեցություններից: Փոփոխությունները կյանքի տարբեր ոլորտներում, տեղաշարժերը հասարակական գիտակցության մեջ իրենց հետքն են թողնում լեզվի բառապաշարում: Բառապաշարն այդ առումով լեզվական համակարգի ամենից «թույլ» օղակն է, այսպես ասած՝ լեզվի լակմուսի թուղթը, որն արագ է արձագանքում հասարակական կյանքի փոփոխություններին: Նոր գիտաճյուղերի ձևավորումն իր հետ բերում է նոր տերմինաբանություն, նոր հոսանքների ծնունդը գրականության և մշակույթի մյուս ոլորտներում խթանում է նոր բառերի, արտահայտությունների առաջացումը կամ եղածների վերաիմաստավորումը, որոնք իրենց արտացոլումն են գտնում բառապաշարում: Այս իմաստով լեզուն բաց համակարգ է: Բայց բաց է գերազանցապես նրա բառապաշարը: Մյուս կողմերով՝ հնչույթաբանական, ձևաբանական և շարահյուսական, լեզուն գերազանցապես փակ համակարգ է: Վերջինները պահպանողական են, շատ դժվարությամբ են փոփոխվում, իսկ այդ փոփոխություններն էլ ուղղակի կապ չունեն լեզվի նկատմամբ արտաքին համակարգերում

(կամ՝

նշանագիտա-

կան այլ համակարգերում) տեղի ունեցած փոփոխությունների հետ: Հնչույթային և քերականական համակարգերի փոփոխությունները ներլեզվական բնույթ ունեն: Թե ո՞րն է հնչույթային (հնչունական) ձևաբանական կամ շարահյուսական այս կամ այն փոփոխության պատճառը, քննելի է մինչև որոշ աստիճան, բայց դժվար է համոզված լինել, թե քննությունը հասնում է սկզբնապատճառին, որովհետև նման դեպքերում գրեթե անհնար է դուրս գալ ներլեզվական (բուն լեզվական) համակարգից և փոփոխության պատճառը ցույց տալ դրանից դուրս, որքան էլ որ տեսականորեն համոզված լինենք, որ այն իսկապես դրանից դուրս է: Ահա թե ինչու, բաց համակարգ լինելով հանդերձ, լեզուն նաև փակ համակարգ է: Իսկ «Դասընթացի» դեպքում լեզուն նախ և առաջ փակ համակարգ է, որովհետև, ըստ նրա, լեզվի բուն էությունն առաջին հերթին կարելի է բացահայտել համաժամանակյա քննությամբ՝ այն դիտարկելով որպես հարաբերականորեն կայուն վիճակ: Այստեղից էլ՝ ներքին լեզվաբանության կարևորումը արտաքին լեզվաբանության համեմատ:

Ի վերջո, թե ի՞նչ է լեզուն՝ որպես համակարգ. պատասխանը տրված է հենց «Դասընթացում» առաջադրված հիմնական գաղափարներով: Դրանք են՝ լեզուն մի համակարգ է. 1) որի բաղադրիչների միջև առկա են երկու տիպի հարաբերություններ՝ շարակարգային և զուգորդային, ընդ որում՝ առաջնային են շարակարգային հարաբերությունները, 2) որտեղ կան միայն նույնություններ և տարբերություններ. լեզվի համար առավել կարևոր են նրա բաղադրիչների միջև առկա տարբերությունները, 3) որը բաղկացած է նշաններից. որպես այդպիսին՝ այն նշանագիտական համակարգերից մեկն է, 4) որի քննությունը պիտի ելակետ ունենա ձևային կողմը, այսինքն՝ այն կադապարը, որով դրսևորվում է հիմնանյութը (սուբստանցը), 5) որի բաղադրիչներն օժտված են արժեքայնությամբ (valeur), ընդ որում՝ նույնաբնույթ բաղադրիչներն ու մանրահի համակարգերը միևնույն արժեքայնությունը չունեն տարբեր լեզուներում և այլն:

Բ) Լեզուն ձև է... «Դասընթացի» մյուս հիմնարար կանխադրույթն ասում է. «...լեզուն ձև է և ոչ թե՛ սուբստանց» (իմա՝ էություն) (187): Իսկ մինչ այդ ձևակերպում է հետևյալ համանման միտքը. «...լեզվաբանությունը գործում է այն սահմանամերձ տարածքում, որում համադրվում են երկու կարգի տարրերը. այդ համադրումից ստեղծվում է ոչ թե նյութ, այլ ձև» (174): Այս կանխադրույթը, թերևս, ամենից շատ է տարակարծությունների տեղիք տվել: Ումանք այն համարում են Սոսյուրի ուսմունքի գլխավոր դրույթը, որի վրա՝ որպես հիմնաքարի, բարձրանում է նրա լեզվաբանական շինությունը¹⁶: Ավելին, դա այն կանխադրույթն է, որը խթանում է XX դարի

¹⁶ Солнцев В. М. Язык как системно-структурное образование, М., 1977. Վ. Սոլնցևը, մասնավորապես, գրում է. «...լեզվի հասկացության մեջ, ըստ Սոսյուրի, ներառվում է կառուցվածքը՝ հնչունական նյութի կառույցը, բայց ոչ այդ հնչունական նյութն ինքը: Հնչման ոլորտը թողնվել է խոսքին: Լեզուն հանդես է գալիս որպես «հիմնանյութի պատիճից» ազատագրված մի բան, որպես մաքուր կառուցվածք» (էջ 8): Ա. Խոլոդովիչը Սոսյուրի ուսմունքի գլխավոր դրույթ է համարում նշանագիտության (sémiologie générale)՝ որպես «հատուկ հասարակական գիտության անհրաժեշտության մասին հաստատումը», որին պիտի մաս կազմի նաև լեզվաբանությունը՝ «որպես գիտություն հատուկ տեսակի նշանների մասին» (տե՛ս Холодович А. А., նշվ. աշխ., էջ 22):

լեզվաբանական առաջատար ուղղության՝ կառուցվածքաբանության ծնունդն ու զարգացումը: Իհարկե, կառուցվածքային ուղղությունը միատարր չէր, և ինչպես այդ, այնպես էլ այլ դրույթներ այս ուղղության ներկայացուցիչների աշխատություններում ստանում էին միմյանցից զգալիորեն տարբեր մեկնաբանություններ: Լեզվի՝ որպես ձևի կանխադրույթն իր ծայրահեղ հետևողական կիրառությունն ստացավ դանիական կառուցվածքաբանության ներկայացուցիչների գործերում և մասնավորապես՝ Լ. Ելմսլևի «Լեզվի տեսության նախագիտելիք» հանրահայտ աշխատության մեջ, որը համարվում է ոչ միայն այդ դպրոցի մանիֆեստը, այլև՝ ամենից հետևողականորեն մշակված հայեցակարգը¹⁷:

Լեզվի ձևային բնույթի ըմբռնումը Մոսկովի հայեցակարգում պայմանավորված է, մասնավորապես, լեզվական արժեքի և լեզվական տարբերությունների ըմբռնումներով: Հռչակելով «լեզվում կան միայն տարբերություններ» (184) կանխադրույթը՝ նա, ըստ էության, առաջին պլան է մղում լեզվական բաղադրիչների լինելության նախապայմանը, առանց որի պարզապես չի կարող պատճառաբանվել դրանց գոյությունը: Չնայած որ լեզուն նկատի է առնվում բացարձակ առումով՝ որպես մարդկության խոսքային հմտությունների ներունակ համակարգ, այդ դրույթը, սակայն, հավասարապես կիրառելի է առանձին վերցրած որևէ լեզվի նկատմամբ, որոնցից շատերին լեզվաբանը դիմում է համապատասխան օրինակների համար: Ընդ որում՝ հիշյալ դրույթը բացարձակ (կամ գրեթե բացարձակ) բնույթ ունի ինչպես միակողմանի, այնպես էլ երկկողմանի միավորների դեպքում: Միակողմանի (միայն արտահայտության պլանով) միավորների համար հարցադրումն ինքնին պարզ է. առանց որոշակի յուրահատկության դրանք ոչ միայն չեն տարբերակվի մեկը մյուսից, այլև չեն կարող իրականացնել իրենց տարբերակիչ և հենց դրանով էլ՝ իմաստաբաղադրիչ գործառույթը լեզվում: Երկկողմանի բաղադրիչները տարբերվում են առնվազն մեկ պլանում՝ բովանդակության կամ արտահայտության¹⁸, իսկ դրանց

¹⁷ Звезгинцев В. А. Глоссематика и лингвистика (Новое в лингвистике, вып. I, М., 1960, с. 239); Мартине А. О книге «Основы лингвистической теории» Луи Ельмслева (նույն տեղում, էջ 438):

¹⁸ «Դասընթացում», իբրև հարաբերակից եզրեր, հակադրվում են «հասկացականը» և «նյութականը», սակայն, մեր կարծիքով, լեզվական և խոսքային պլանների տարբերակված կիրառության դեպքում հակադրությունն ավելի լայն է, որովհետև արտահայտության պլանը կարող է ներկայացված լինել ինչպես նյութական (օրինակ՝ հնչաբառը), այնպես էլ վերացարկված (օրինակ՝ լեզվական բառը) միավորներով: Մյուս կողմից, բովանդակային կողմը կարող է ներկայացված լինել ինչպես հասկացական իմաստով, այնպես էլ՝ պարզապես բառիմաստով, ինչպես շաղկապների, վերաբերականների և այլ դեպքերում:

Ճնշող մեծամասնությունը տարբերվում է երկու պլաններում էլ: Այս իմաստով կարող են բացառություն համարվել համանուն ձեվայթները, օրինակ՝ -ի, -ում, -իկ, որոնց իմաստը որոշակիանում է միայն բառաձևերի մեջ, ինչպես՝ գրք-ի (ի՞նչի¹⁹), խոս-ի (ի՞նչ անի), հայել-ի (ի՞նչ), խոսք-ում (որտե՞ղ), շարժ-ում (ի՞նչ), խոս-ում (է) (ի՞նչ է անում), մարդ-իկ (ովքե՞ր), փոքր-իկ (ի՞նչ, ինչպիսի²⁰) և այլն¹⁹:

Լեզվական արժեքի հասկացության հիմքում ևս տարբերությունների մասին կանխադրույթն է: Որևէ բաղադրիչի լեզվական արժեքը որոշելու համար կարևոր նշանակություն ունի միևնույն համակարգի նույնաբնույթ բաղադրիչներից դրա ունեցած տարբերությունը: Այսպես, ֆրանսերենին և ռուսերենին բնորոշ է սեռի քերականական կարգը, բայց դրանք համարժեք մեծություններ չեն, որովհետև ռուսերենի եռասեռ (արական, իգական, չեզոք) համակարգին ֆրանսերենը հակադրում է միայն երկսեռ (արական, իգական) համակարգ, ինչը նշանակում է, որ ֆրանսերենի գոյականի սեռերից յուրաքանչյուրը լեզվական ավելի մեծ ծանրաբեռնվածություն ունի, քան՝ ռուսերենի գոյականի սեռերից յուրաքանչյուրը: Կամ՝ ֆրանսերենի հնչույթային համակարգում տարբերակվում է տասնհինգ²⁰ ձայնավոր հնչույթ, իսկ, օրինակ՝ գրական արևելահայերենում՝ միայն վեց: Սա նշանակում է, որ հայերենի ամեն մի ձայնավոր հնչույթ ավելի մեծ ծանրաբեռնվածություն ունի (ավելի հաճախ է գործածվում), քան ֆրանսերենի ձայնավորներից յուրաքանչյուրը: Տարբերությունը ենթադրում է համեմատություն, ինչը նըշանակում է, որ լեզվական արժեքի մասին կարող է խոսք լինել միայն այն դեպքում, եթե կան համեմատվող, որ նույնն է՝ հակադրվող ձևեր: Հետևաբար, ինչպես առանձին վերցրած որևէ լեզվի, այնպես էլ առհասարակ լեզվի՝ որպես գոյություն ունեցող և երբևէ ունեցած էթնիկական լեզուների վերացարկված տիպի բնութագրի համար կենսականորեն կարևոր նշանակություն ունի լեզվական ձևի ըմբռնումը, առանց որի սուբստանցը կամ մատերիան պարզապես գոյություն չունի, անձն է, հետևաբար՝ անընկալելի, ինչպես քառսը: Ուստի և Սոսյուրը բոլոր հիմքերն ունենալու, որ «լեզուն ձև է»: Բայց արդյո՞ք նույնչափ հիմնավոր է երկրորդ պնդումը՝ «և ոչ թե՛ սուբստանց»: Մեր կարծիքով՝ ոչ, որովհետև կա տրամաբանական հարցը՝ ինչի՞ ձևն է: Չի կարող լինել ձև՝ առանց մատերիայի կամ ձև առանց բովանդակության, հետևաբար չի կարող նաև լինել ձև՝ առանց սուբստանցի: Արդի լեզվաբանության մեջ ձևային

¹⁹ Ըստ էության, համանունային հարաբերակցություն կա նաև չտարբերակված արմատական ձևայինների տարաբեռն (տարբեր խոսքի մասերի նշանակությամբ) կիրառությունների միջև, ինչպես՝ խոս-(ք) և խոս-(ել), հեն-(ու) և հեն-(անալ), գ(ը)ր-(ի) և գ(ը)ր-(ել) և այլն:

²⁰ Տարբեր ուսումնասիրողների մոտ ֆրանսերենի ձայնավոր հնչույթների թիվը տատանվում է 15-17-ի միջև. տե՛ս Չերբա Լ. Վ. *Фонетика французского языка*, М., 1955, с. 25-58; Кузнецов П. С. *К вопросу о фонематической системе современного французского языка* (Реформатский А. А. *Из истории отечественной фонологии*, М., 1970, с. 163-203):

կայության նշանակությամբ հաճախ գործածվում է զրո ձևությ արտահայտությունը, որը, սակայն, պայմանական բնույթ ունի և որպես այդպիսին՝ ընկալելի է նշությավորված ձևությի հետ հակադրության մեջ (քար-Յ// (քար)-ի// (քար)-ից և այլն): Երբ չկա նշությավորված (իմա՝ իրական) ձևությ, անտրամաբանական է նաև աննշությի տարբերակումը: Դա նույնն է, թե, օրինակ, ֆրանսերենի կամ անգլերենի գոյականի դեպքում խոսել ուղղական հոլովի տարբերակման մասին, երբ գոյականն այդ լեզուներում չունի թեք կիրառություն: Իսկ ձևությ ձևի և իմաստի ամբողջությունն է: Կա ձևությի ձևը (իմա՝ արտահայտությունը), որովհետև կա դրա իմաստը (սուբստանցը):

Մոսյուրյան «լեզուն ձև է և ոչ թե՝ սուբստանց» դրությը հակասության մեջ է «Դասընթացի» նույն՝ «Լեզվական արժեքը» գլխի առաջին պարագրաֆի հետ, որտեղ մտքի և հնչյունի հարաբերակցության առնչությամբ նա ասում է. «...լեզվում հնարավոր չէ հնչյունն առանձնացնել մտքից, ոչ էլ միտքը հնչյունից» (174): Չնայած որ այդ մտքին անմիջականորեն հաջորդող ձևակերպումը («...լեզվաբանությունը գործում է այն սահմանամերձ տարածքում, որում համադրվում են երկու կարգի տարբերք. այդ համադրումից ստեղծվում է ոչ թե նյութ, այլ ձև» (174)), ըստ էության, նախապատրաստում է հայտնի կանխադրությը, դրանից, սակայն, հակասությունը չի վերանում, որովհետև մտքի և հնչյունի կապը ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ բովանդակության և արտահայտության կապ, սուբստանցի և ձևի կապ: Ինչպես որ չի կարող լինել անձև սուբստանց, այնպես էլ չի կարող լինել ձև՝ առանց սուբստանցի:

«Լեզուն ձև է...» կանխադրությով Մոսյուրը հակադրվում է երիտքերականությանը, որի ներկայացուցիչները լեզուն բացատրում էին հակառակ դիրքերից: Ընդ որում՝ այդ հակասությունը չէր սահմանափակվում միայն հիշյալ փիլիսոփայական բնույթի հարցադրումով, այլ ներառում էր սկզբունքների ու մոտեցումների ավելի լայն շրջանակ, այդ թվում՝ լեզվաբանության՝ որպես լեզուն ուսումնասիրող գիտության ուղղվածության հարցը: Եթե ըստ երիտքերականների լեզվաբանությունը կարող է լինել միայն պատմական (դիախրոնիկ)²¹, ապա Մոսյուրը տարբերակում է երեք տիպի

²¹ Пауль Г. Принципы истории языка, М., 1960. Առհասարակ երիտքերականների տեսական հայացքների ամփոփումը համարվող սույն աշխատությունը ոչ միայն հետևողականորեն ներկայացնում է առաջին նախադասությամբ հռչակված սկզբունքը («Ինչպես և մարդկային մշակույթի ամեն մի արդյունք, լեզուն պատմական քննության առարկա է», նույն տեղում, էջ 25), այլև առաջադրում է մի «հատուկ գիտության» անհրաժեշտության գաղափարը, որը, ըստ հեղինակի, պետք է լինի «տարբեր օրենսդիր գիտությունների, կամ, ավելի շուտ՝ այդ գիտությունների առանձին հատվածների կոնգլոմերատ»: Այդ գիտությունը պիտի ուսումնասիրի «պատմականորեն զարգացող օբյեկտի կյանքի ընդհանուր պայմանները և հետազոտի բոլոր փոփոխություններում հավասարաչափ ներկայացված գործոնների էությունն ու գործունակությունը» (նույն տեղում): Այդ հատուկ գիտությանը պիտի մաս կազմի նաև լեզվաբանությունը:

Պատվի այս միտքը շատ է հիշեցնում հասարակական երևույթներն ուսումնասիրող ընդհանուր գիտության անհրաժեշտության սոսյուրյան պահանջը, որը վերջինս անվանում է նշանաբանություն (տե՛ս Ֆերդինանդ դը Մոսյուր, նշվ. աշխ., էջ 32): Այս գուգահեռից նկատելի է, որ արդեն XIX դարի վերջերին գիտական շրջանակներում, մասնավորապես՝ հումանիտար գիտությունների մեջ ձևավորվել էր հասարակական կյանքի բոլոր կողմերի քննությունը ներառող և դրանց զարգացման օրինաչափական միտումները բացահայտող գիտության մշակման գաղափարը, բայց տարբեր են եղել այդ ուրվագծվող գիտության բուն էության մասին պատկերացումները: Եթե Պատվն այդ գիտությանը տալիս է «ուսմունք սկզբունքների մասին» պայմանական անվանումը, ապա Մոսյուրն ավելի որոշակիացնում է՝ այն

լեզվաբանություն՝ տարածամանակյա (պատմական), համաժամանակյա և հարաժամանակյա՝ նախապատվությունը տալով երկրորդին, այն է՝ լեզվի նկարագրական քննությանը:

Ուշագրավ է, որ ինչպես վերը հիշված մյուս գաղափարները, այնպես էլ լեզվի ձևային բնույթի ըմբռնումը լեզվաբանության մեջ կապվում է Սոսյուրի անվան հետ, այնպես, ինչպես երիտքերականների անվան հետ են կապվում լեզվի՝ որպես սուբստանցի և հնչյունական օրենքի գաղափարները: Սակայն լեզվի ձևային բնույթի վերաբերյալ հարցադրումը կարևոր տեղ ունի նաև Վիլհելմ ֆոն Հումբոլդտի արդեն հիշատակված «Մարդկային լեզուների կառուցվածքի տարբերությունների և մարդկության հոգևոր զարգացման վրա դրա ազդեցության մասին» աշխատության մեջ: Սովորաբար Հումբոլդտին վերագրվում է լեզվի ներքին ձևի ըմբռնումը, բայց նա լեզվական ձևի հիմնախնդրին անդրադարձել է լայն առումով: Հումբոլդտի լեզվաբանական հայացքներին (դրանց ամփոփումը կարող է համարվել հիշյալ աշխատությունը) բնորոշ է որոշ խորհրդավորությունը, որի արմատները պետք է փնտրել ինչպես առհասարակ նրա փիլիսոփայական և գեղագիտական (ամբողջության մեջ՝ մարդաբանական և գոյաբանական) հայացքների համակարգում, այնպես էլ, ընդհանրապես, նրա ժամանակի առաջատար գաղափարների համատեքստում: Գաղափարներ, որոնց ակունքներում կանգնած էին գերմանական մտքի հսկաները՝ Է. Կանտը, Գ. Հեգելը, Վ. Գյոթեն, Ֆ. Շիլլերը և ուրիշներ:

Հումբոլդտը լեզուն քննում և նրա էությունը փորձում է բացատրել՝ միաժամանակ ելակետ ունենալով թե՛ առանձինը (որն է ազգային կամ ցեղային լեզու) և թե՛ ընդհանուրը (լեզուն՝ որպես համամարդկային կարողություն): Այդ սկզբունքը նա կիրառում է և՛ լեզվական ողջ համակարգը, և՛ նրա նվազագույն բաղադրիչը՝ «հրն-չյունը» քննելիս: Լեզվի կազմավորման և դրա գործառնության հիմքում, ըստ Հումբոլդտի, «նախաստեղծ ոգին» է կամ «հոգևոր ուժը», որի գործունեության արդյունք են ինչպես ընդհանրությունները մարդկային լեզուների միջև, այնպես էլ դրանց տարբերությունները: Լեզվական մատերիայի և ձևի միջև առկա է փոխադարձ պայմանավորվածություն, իսկ այդ պայմանավորվածության նվազագույն արտահայտությունը հնչյունն է («Լեզվի բնութագրական

անվանելով նշանաբանություն (սեմիոլոգիա): Թերևս այս կողմնորոշումը չի եղել առանց ամերիկացի բանասեր Ու. Դ. Ուիթնիի գիտական աշխատանքներին Սոսյուրի ունեցած ծանոթության (տե՛ս Фердинанд де Соссюр, Заметки по общей лингвистике, М., 1990):

ձևը արտացոլվում է դրա փոքրագույն բաղադրիչների մեջ, և դրանցից յուրաքանչյուրը այս կամ այն կերպ և ոչ միշտ ակնհայտորեն որոշվում է լեզվական ձևով²²)։ Լեզվի ձևը և մատերիան դիտարկելով իբրև միասնական ամբողջություն, այնուամենայնիվ, լեզվական սուբստանցի (իմա՝ մատերիայի) հետազոտման միջոցը, ըստ Հումբոլդտի, լեզվական ձևն է («... ձևի հասկացությունը հետազոտողին ճանապարհ է բացում դեպի լեզվի գաղտնիքների ըմբռնումը, դրա էության բացահայտումը²³»)։ Ձևի հասկացությունը Հումբոլդտը զուգահեռաբար դիտարկում է թե՛ լեզվի նկատմամբ առհասարակ և թե՛ առանձին լեզուների առնչությամբ։ Եթե առաջին՝ ընդհանրական չափանիշով լեզվի «ոգու գործունեության մեջ» այն «մշտականն ու միատեսակն» է, որը հոդաբաշխ հնչյունը բարձրացնում է մինչև «մտքի արտահայտումը²⁴», ապա առանձին լեզուների դեպքում հնչյունական ձևին է վերագրվում դրանց միջև տարբերությունների փաստը²⁵։

Լեզվի՝ որպես իր դրսևորումների մեջ բազմազանությամբ և տարատեսակություններով հատկանշվող ամբողջության, այլ կերպ ասած՝ որպես յուրահատուկ համակարգի մասին Հումբոլդտի պատկերացումը, տարրալուծվելով աշխատության էջերում, ճիշտ է, որոշ դժվարություն է ստեղծում նրա լեզվաբանական հայեցակարգի ընկալման համար, բայց, կարծես զգալով այդ վտանգը, հեղինակն ինքը պարբերաբար կատարում է ամբողջացնող բանաձևումներ։ Լեզվական ձևի մասին այդպիսի բանաձևումներից մեկն ասում է. «Ձևին հակադրվում է, իհարկե, մատերիան (stoff)....», ապա ավելացնում է. «Բացարձակ իմաստով լեզվում չի կարող լինել ոչ մի չձևավորված մատերիա²⁶»։

Առերևույթ համահունչ են թվում Հումբոլդտի և Սոսյուրի պատկերացումները լեզվի ձևային բնույթի վերաբերյալ։ Իրականում, սակայն, հարցն այդքան էլ պարզ չէ, երբ այդ տեսակետները դիտարկում ենք համապատասխան հայեցակարգերի համատեքստում։ Ըստ այդմ, ճիշտ չի լինի ասել, որ Հումբոլդտի ուսմունքում առկա է լեզվական ձևի և լեզվական սուբստանցի կտրուկ տարանջատում և սուբստանցի նկատմամբ ձևի այնպիսի գերակայություն, որպիսին տեսնում ենք Սոսյուրի կանխադրություն։ Դե, նույնիսկ Սոսյուրի դեպքում դժվար է անվերապահորեն պնդել, թե լեզվական բնութագրից սուբստանցը լիովին օտարված է։ Թե՛ Հումբոլդտի և թե՛ Սոսյուրի աշխատության մեջ սուբստանցի համեմատությամբ ձևն արդարացիորեն առաջին պլան է մղված, որովհետև իսկապես էլ առանց ձևի սուբստանցը անորսալի է և անընկալելի, այն ենթակա չէ ոչ համադրության, ոչ էլ՝ հակադրության։ Անձև սուբստանցը հիշեցնում է քամելեռն։ Մյուս կողմից, սակայն, ձևն էլ որոշակի սուբ-

²² Вильгельм фон Гумбольдт, *նշվ. աշխ.*, էջ 71։

²³ Նույն տեղում, էջ 72։

²⁴ Նույն տեղում, էջ 71։

²⁵ Նույն տեղում։

²⁶ Նույն տեղում, էջ 72-73։

ստանցի (բովանդակության, մատերիայի) ձևն է, որովհետև չի կարող լինել ինքնին ձև: Հետևաբար ճիշտ կլինի լեզուն բնորոշել որպես ձևավորված սուբստանց: Ըստ էության՝ այդպիսին է լեզվի հումբոլդտյան ընկալումը: Այդպիսի բնութագրին, կարծում ենք, դեմ չէին լինի ոչ երիտքերականները, ոչ էլ Սոսյուրը²⁷:

Ինչպես տեսնում ենք, «Դասընթացի» երկու առավել կարևոր գաղափարները՝ լեզվի համակարգային և ձևային բնույթի վերաբերյալ կանխադրույթները, առնվազն իբրև հարցադրումներ, կային նաև դրանից առաջ: Նախադասընթացյան լեզվաբանական մտքին հայտնի էին նաև այլ հասկացություններ, ինչպես լեզվի նշանային բընույթը, լեզվի և խոսքի, տարածամասնակյա և համաժամանակյա հայեցակետերի, հնչյունի և հնչույթի տարբերակումները և այլն: Ավելին, «Դասընթացը» նորարարական համարվող գաղափարների կողքին բովանդակում է նաև տեսակետներ և արտահայտություններ, որոնք ընդհանուր էին ժամանակի լեզվաբանական մտքի համար կամ էլ պատկանում էին այլ մտածող(ներ)ի: Այսպես, «Դասընթացում» կարդում ենք. «Որևէ ազգի բարքերն արտացոլվում են նրա լեզվում, մյուս կողմից էլ՝ հենց լեզվի շնորհիվ է մեծ չափով ձևավորվում ազգը» (39): Արդյո՞ք այս միտքը չի հիշեցնում Հումբոլդտի հետևյալ նշանավոր ասույթը. «Լեզուն կարծես ժողովրդի ոգու արտաքին դրսևորումն է. ժողովրդի լեզուն նրա ոգին է, և ժողովրդի ոգին նրա լեզուն է, ու դժվար է պատկերացնել ավելի նույնական որևէ բան»²⁸:

Իհարկե, սխալ կլինի վերոշարադրյալից եզրակացնել, թե իրականում «Դասընթացը» միայն կրկնում է արդեն իսկ ասվածը՝ լեզվաբանական մտքին չառաջարկելով նոր ոչինչ: Նման եզրահանգումը պարզապես կհնչեր իբրև իրականության ակնհայտ խեղաթյուրում: Այդ դեպքում ո՞րն է «Դասընթացի» արժանիքը, ինչո՞վ է այն հարստացրել XX դարի լեզվաբանական միտքը, որ ավելի քան իննսուն տարի անց շարունակում է մնալ գիտական հետաքրքրությունների տեսադաշտում: Առաջին հերթին, անշուշտ, նոր գաղափարներով: Դրանցից են, օրինակ, շարակարգային և զուգորդային հարաբերությունների, արժեքի (valeur), նույնությունների և տարբերությունների ըմբռնումները, որոնք առաջին անգամ ժամանակի լեզվաբանական մտքին ներկայացվեցին հենց «Դասընթացի» միջոցով: Բացառությամբ, թերևս, լեզվի ձևային ըմբռնման, որի բավականին ամբողջական պատկերացումը տալիս է Վ. ֆոն Հումբոլդտը, մյուս բոլոր հասկացությունները նախքան «Դասընթացը»

²⁷ Այդպիսի բնութագրի դեմ կառարկեին, թերևս, միայն կուպենհագենյան ըստրուկտուրալիստները, ըստ որոնց՝ «լեզվի կառուցվածքը» (նույնն է, թե՛ լեզուն) «կախվածությունների ցանց, կամ, ավելի հստակ, մասնագիտական կամ ճշգրիտ լեզվով ասած, գործառնությունների ցանց է» (տե՛ս **Ельмслев Л.** Понятие управления (Звегинцев В. А., նշվ. աշխ., մաս. II, էջ 101):

²⁸ **Вильгельм фон Гумбольдт**, նշվ. աշխ., էջ 78, նույնի՝ *Характер языка и характер народа* (**Вильгельм фон Гумбольдт. Язык и философия культуры, М., 1985, с. 370-381).**

ավելի շուտ շրջանառվող շարքային տերմիններ էին, քան թե՝ ամբողջացած հասկացություններ: Սոսյուրը ոչ միայն այդ տերմիններին շունչ ու ոգի հաղորդեց, այլև ճշտեց դրանց տեղը իր պատկերացրած լեզվական համակարգում: Սա վերաբերում է, օրինակ, լեզվի նշանային բնույթի, լեզվի և խոսքի տարանջատման՝ մի կողմից, և դրանք մեկ ամբողջի՝ լեզվախոսության տիրույթում դիտարկելու, լեզվական նյութի քննության տարբեր հայեցակետերի տարբերակման վերաբերյալ նրա առաջադրած գաղափարներին:

Իհարկե, «Դասընթացը» բացառապես նոր գաղափարների շտեմարան չէ: Այդպես չի էլ լինում առհասարակ, որովհետև ոչ մի արժեքավոր գործ չի ծնվում ամայության մեջ: Այն մի զգալի չափով կրում է իր ժամանակի դրոշմը: Ասվածը վերաբերում է, մասնավորապես, համեմատական քերականության նյութին, որը գերակայող դիրք ուներ ժամանակի լեզվաբանության մեջ և ոչ միշտ էր տարանջատվում լեզվաբանության տեսությունից: Չէ՞ որ Սոսյուրի գիրքը համալսարանական ծրագրով նախատեսված դասընթացի արտացոլումն է, այսինքն՝ կոչված էր լինելու դասագիրք և ոչ թե մենագրական աշխատություն: Ըստ երևույթին, նաև այդ պատճառով միանգամից չնկատվեց ու չգնահատվեց «Դասընթացի» հայեցակարգային նորույթը, որով զարգացման նոր հուն էր առաջարկվում ապագայի լեզվաբանությանը: Շատերն այդ յուրօրինակ ճակատագրի գիրքը գնահատեցին ըստ առանձին հարցադրումների (ինչպես որ մենք քննության նյութ դարձրինք միայն երկու կանխադրույթ), որոնք ավելի հեշտ է ընդունել կամ մերժել, այնինչ՝ այն պետք էր դիտարկել իր հայեցակարգային ամբողջության մեջ, որի դեպքում է միայն հնարավոր դրա ճիշտ գնահատականը: Իսկ այդ գնահատականը տվել է ժամանակը՝ «Դասընթացին» հատկացնելով ամենից պատվավոր տեղերից մեկը լեզվի մասին գիտության մեջ:

Ընդհանրապես յուրաքանչյուր գիտնականի (գրողի, արվեստագետի և այլն) վաստակի մեջ առանձնանում է մի գործ՝ որպես նրա ստեղծած բուրգի գագաթ: Հազվադեպ է պատահում, որ այդ վաստակը նմանվի ոչ թե միագագաթ բուրգի, այլ երկգագաթ (եռագագաթ և այլն) լեռան: Երկրորդ տեսակին է պատկանում Սոսյուրի՝ ոչ մեծածավալ, բայց մեծարժեք գիտական վաստակը, որի երկու բարձրակետերն են գիտական գործունեության նախաշեմին հանճարեղ պոռթկումով ծնված «Նկատառումները» և հետմահու հրատարակված «Դասընթացը», որն իր անավարտությամբ անգամ բարձրաթիչ մտքի կոթող է:

ДВА СОССЮРОВСКИХ ПОСТУЛАТА

ПЕТРОСЯН В. З.

Резюме

“Курс общей лингвистики” Ф. де Соссюра – одна из веховых работ теоретической лингвистики.

В

ней

выдвинуты

некоторые

постулаты, научные диспуты вокруг которых явились не только стимулом для развития лингвистической мысли XX века, но и создали предпосылки для формирования новых лингвистических направлений и школ. Среди этих постулатов по своей важности можно выделить, в частности, соссюрсовское восприятие системной и формальной природы языка. Для раскрытия сути этих постулатов существенное значение имеют параллели, проводимые автором на основе соссюрсовских и гумбольдтовских толкований этих проблем.